ԿՈՉ

Հայոց գրերի գիւտի 1500 ամեակի և տպագրութեան 400 ամեակի առթիւ Ն. Սրբութեան կարգադրութեամբ կազմուած և հաստատուած է խմբագրական մի մասնաժողով, որի վրայ պարտաւորութիւն է դրուած մի գիտական ժողովածու հրատարակել միացեալ երկու մեծ տօներին վայել լրջութեամբ և ճոխութեամբ։ Ժողովածուի նիւթ պէտք է լինի ընդարձակ մտքով հասկացուած հայագիտական ամեն մի յօդուած, այսինքն հայ պատմութեան, մատենագրութեան, լեզուի, հնագիտութեան և արուեստի, աշխարհագրութեան, ազգագրութեան ևն վերաբերեալ, որ կընդունուի խմբագրական մասնաժողովի կողմից։ Յօդուածի ծաւալը պէտք է լինի ոչ աւել, քան երկու տպագրական թերթ 16⁰։ Իւրաքանչիւր երեսի համար նշանակուած է մի ռուբլի վարձատրութիւն։ Այսու Մ. Աթոռի կարող միաբաններից և Ճեմարանի ուսուցիչներից դատ՝ հրաւիրուում են և դրսի հայ բանասէրները մասնակցելու մեր կազմելիք ժողովածուին։ Յօդուածները պէտք է ուղարկուեն ոչ ուշ քան հոկտեմբերի վերջը։ Ընդունուած յօդուածները հեղինակների ցանկութեան համեմատ յետ կուղարկուեն իրենց։

Խմբագրական Մասնաժողովի

Փոխ Նախագահ՝ Գարեգին Վարդապետ

Քարտուղար՝ Ստեփան Կանայեան

Արարատ և Տարազի խմբագրութեան գրասենեակը ու **Մամուլի Բիւրօն** յայտնում են, որ մի որևէ № չընտանալու համար բաժանորդը պէտք է իր բողոքը յայտնէ իր բնակավայրի պօստատանը, որտեղից նա ստանում է իր թերթերը, որպէսզի վերջինս յայտնէ Թիֆլիսի կենտր. պօստատան և հնարաւոր լինի կորուստի հետքը գտնելու։ Պարբերական թերթերի՝ իւրաքանչիւր № հաշուով յանձնուում են պօստատան և առնուում ընկալագիր։ Իւրաքանչիւր քաղաքի, գիւղի թերթեր առանձին-առանձին կապուում են, և Թիֆլիսում երբէք չեն կարող կորչել №№-ը, իսկ խմբագրութիւնն էլ բաժանորդի առաջ պատասխանատու չէ, երբ նա ունի №-ը պօստին յանձնածի ապացոյցը։ Այն բողոք մնում է անհետևանք, եթէ բաժանորդը յիշեալ պայմանը զանց առնելով, դիմում է իր պահանջով ուղղակի խմբագրութեան։

Չի կարդացուում և այն նամակը, որի ճակատին չէ գրուած նամակագրի պարզ հասցէն և մնում է առանց պատասխանի, եթէ նամակագրոշմ չէ ուղարկուած պատասխանի համար։